ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Կ Ա Ր Գ Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

29 հունվարի 2014 թվականի N 4-Ա

«ԳՈՐԱՅՔԻ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԱՌԱՋՆԱՅԻՆ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասով, Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 111-րդ հոդվածի 1-ին կետով և համաձայն «Գորայքի առողջության առաջնային պահպանման կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության տնօրեն Կարինե Հարությունյանի անձնական դիմումի, **կ ա ր գ ա դ ր ու մ ե մ՝**

1. 2014թ. հունվարի 29-ից լուծել « Գորայքի առողջության առաջնային պահպանման կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության տնօրեն Կարինե Հարությունյանի հետ 2009 թվականի հունվարի 29-ին կնքված N3 աշխատանքային պայմանագիրը, նրան նշանակելով նույն ընկերության տնօրենի պաշտոնակատար մինչև ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ընկերության տնօրենի թափուր պաշտոնի համար մրցույթի անցկացումը:

Հիմք. Կ. Հարությունյանի անձնական դիմումը:

2. ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի ղեկավարին. ապահովել սույն կարգադրությունից բխող անհրաժեշտ գործառույթների իրականացումը:

ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ *Վ. ՀԱԿՈԲՅԱՆ*

2014թ. հունվարի 29
ք. Կապան